

# Գիրություն

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ՀՈՒԽ -  
ՕԳՈՍՏՈՒ  
№ 7-8  
(273)  
2014 թ.

Հրատարակում է 1993 թ. փետրվարից



## Պատվավոր դոկտորի հիպոմերի հանձնում

ՀՀ ԳԱԱ-ում

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունում հուլիսի 2-ին ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի դիպոլմում հանձնվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանագիտ S. Արշակ Եպիսկոպոս Խաչատրյանին, Հայաստանյաց առաքելական եկեղեցու Արքային Թեմի առաջնորդ S. Պարքի արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, Հայաստանի աստվածաշնչային ընկերության հոգարածուների Խորհրդի նախագահ S. Եղմիկ արքեպիսկոպոս Պետրոսյանին:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

## ՄԻԶԱՋԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

## Զրի խնդիրը չափապանց լորջ է ողջ աշխարհում

Օրերս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կայացավ միջազգային գիտաժողով «Զրային ռեսուրսների կայուն կառավարում և Ասիական երկրներում լեռնային լճերի էկոհամակարգերի պահպանում» թեմայով:

«Այս գիտաժողովը շատ կարևոր է տարածաշրջանի համար, որովհետև այսօր ջրի խնդիրն ընդհանրապես ամբողջ աշխարհում շատ լուրջ է: Այն հնարավորություն կտա գիտական կազմակերպությունների հետ համատեղ ծրագրեր ներկայացնելու միջազգային տարբեր կառույցներին: Մենք պատրաստ ենք համագործակցության ոչ միայն այս բնագավառում, այլև հարակից այն գիտական ուղղություններում, որոնք կնպաստեն այս խնդրի լուծմանը», ողջունի խոսքուն ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

### ՌՈՍՅԱՆԸ:

Ասիական երկրների գիտությունների ակադեմիաների ասոցիացիայի նախագահ, դոկտոր Վոն Չու-Պարկը բարձր գնահատեց ասիական ակադեմիաների ազակցությունն այս ոլորտի խնդիրների քննարկման և լուծումների առաջարկման հարցում: Իր ողջունի խոսքում նա մասնավորապես ասաց. «Թույլ տվեք երևանյան այս գիտաժողովը դարձնել ևս մեկ անկյունաքար Աստղիացիայի այն ձեռքբերումների համար, որոնք վերջին տարիների ընթացքում ունենք ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ»:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին նաև ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտի փոխտնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը, Ասիական երկրների գիտությունների ակադեմիաների ասոցիացիայի փոխնա-

խագահ, Թուրքիայի գիտությունների ակադեմիայի անդամ, պրոֆեսոր Խամիկ Քենալ Արազը:

Այսուհետև հայ և օտարերկրյա գիտնականները հանդես եկան ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ գեկույցներով, որոնք վերաբերում էին հետևյալ խնդիրներին.

1. Ջրային ռեսուրսների կառավարում, ռազմավարություն և մուտեցումներ,

2. անդրամանային ջրային ռեսուրսների կայուն կառավարում,

3. գետերի և լեռնային լճերի էկոհամակարգերի կառավարում,

4. ջրի որակի կառավարում,

5. կլիմայի փոփոխության համատեքստում ջրային ռեսուրսների ռացիոնալ կառավարում:

Գիտաժողովը կազմակերպված էր Ասիական երկրների գիտությունների ակադեմիաների ասոցիացիայի և ՀՀ ԳԱԱ-ի համագործակցության շրջանակներում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



«Զրային հարազանը»  
Մերձավոր Արևելքում

# Շովիաննես Այվազովսկի «Իններորդ ալիք»



«Կանգնեցե՛ք», գոչեց, վրձինը ձեռքին,  
Կախարդ ծերունին հուզված տարերքին.  
Եվ լուս, հնազանդ հանձարի ձայնին,  
Մութ ալիքները փոթորկի ժամին  
Կտավի վրա կանգնած են ահա...

Եղիշեանց ԹուՄԱՆՅԱԼԻ  
1893 թ.

# **«ՀԱՄԱՆԱՐԿԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԱՅ ՃՈՂՈՎՐԴԻ ԿՐԱՅ ՎԵԱՍԼԵՐԻ ՔԵՆՔ ՀԱՅԱԺՈՂՈՎԻ» ԳՈՐԾՈՒԵԼՈՒԹՅՈՒՆ**

Ուղիղ հարյուր տարի առաջ՝ հուլիսյան այս օրերին, սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը։ Այն հայ ժողովրդին բերեց անհաշիվ-ահօնի կորուստներ։ Տեղի ունեցավ Հայոց ցեղասպանությունը, հայրափակեց Արևմտյան Հայաստանը, Արևելյան Հայաստանում թուրքերը մեծ ավերածություններ գործեցին։

Պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ 1918 թ. նոյեմբերի 21-ին, Թիֆլիսում գործող Հայ հայրենակացական միությունների կենտրոնական խորհրդի ընդհանուր ժողովում նրա նախագահ Յովի. Թունանյանի գլխավորությանը հիմնվում է «Համաշխարհային պատերազմում հայ ժողովորդի կրած վճասների քննիչ համձնաժողով»: Խնդիրն այն էր, որ Փարիզում սպասվում էր խաղաղության վեհաժողովի գումարում, և հզոր ու ոչ հզոր ժողովուրդներից պահանջվում էր հաշվարկված փաստացի Յովագիր (Մեմորանորում) ներկայացնել Համաշխարհային պատերազմի հետ կապված հզորների պարագայում՝ ծառայությունների և մասնակցության չափերի, ոչ հզորներինը՝ ըստ կրած վճասների ու կորուստների:

Նոյեմբերի 24-ին արդեն Հայրենակցական միությունների վարչության ժողովում (մասնակցել են ավելի քան 30 հայրենակցական միություններ), ապա և դեկտեմբերի 4-ի միությունների խորհրդի նիստում հանձնաժողովի նախագահ Թունանյանը համեստ է գալիս քննիչ հանձնաժողովի ստեղծման, խնդիրներին և գործունեությանը նվիրված գեկույցներով։ Ըստ այս ստեղծվում է չորս ենթահանձնաժողով՝ կամ բաժին։ Առաջին՝ պատմաքաղաքական բաժինը դեկավարելու համար հրավիրվում է անվանի հայագետ Լեռն, որը պետք է ներկայացներ Հայկական հարցի պատմությունը։ Երկրորդ բաժինը՝ ռազմապատմականը, ժամանակավոր, մի քանի գինվորականներով կառավարելու է նշանակվում Տիգրան Բեկազյանը։ Բաժինը պետք է ներկայացներ հայկական գինված ուժերի, հայ ժողովրդի մասնակցությունը պատերազմին, ցույց տար դրա նշանակությունը։ Տնտեսական բաժնի վարիչ է նշանակվում Քրիստափոր Վերմիշյանը։ Բաժինը պետք է հաշվարկեր Համաշխարհային պատրազմում հայ ժողովրդի կրօս վնասները։ Քրեական-քնչական բաժնի վարիչ է նշանակվում Տիգրան Ցովհաննիսյանը։ այն պետք է բացահայտեր ու արձանագրեր թուրքական հարձակումների ժամանակ հայերի կոտրածների ու սպանությունների բոլոր փաստերը։ Կարծ ժամանակից ռազմապատմական բաժնի վարիչ է նշանակվում 1914 թ. աշնանից Կովկասյան ճակատում և Արևմտյան Հայաստանում լայն գործունեություն ծավալած գեներալ-մայոր, բանաստեղծ Ալեքսանդր Կուլեբյակինը, իսկ տնտեսական բաժնի վարիչ՝ գյուղատնտես, խնբագիր-հրատարակիչ, երգիչ-ժարան Աշոտ Արամանյանը։

տանքները կատարելու համար անհրաժեշտ էր լինելու կես միլիոն ռուբլի:

Եվ, սակայն, հենց սկզբից նյութական-ֆինանսական ծանր վիճակը խանգարում է քննիչ հանձնաժողովի աշխատանքներին: Այնքան, որ տակավին 1918 թ. դեկտեմբերի 14 տարեթվով գորավար Անդրանիկին հասցեագրած նամակում Նովի. Թումանյանը հայտնում էր. «Սեր կառավարությունը մինչև եսօր էլ կոնգրեսին ներկայացնելիք մենորանդումի համար հոգս չքաշեց, նյութեր չհավաքեց, թե ինչ կորուստներ ենք ունեցել մենք, կամ ինչ բռնություններ են կատարվել մեր ժողովորի համբեա: Ստիպված մենք սկսեցինք Հայունակցական միությունների կենտրոնական խորհրդող: Այժմ իմ նախագահությամբ մի բյուրո է կազմված և աշխատում է եռանդով: Կառավարությունն է տվել է իր սանկցիան»:

Ամեն դեպքում նյութականը շարունակում է վճարել հանձնաժողովի աշխատանքներին, և Թումանյանը ստիպված 1919 թ. մարտի 4 տարեթվով (հեռագրով) դիմում է ՀՀ մինիստրության նախագահ Արմեն Սահակյանին՝ խնդրանքով. «Դամաշշարհային պատերազմում հայերի կրած վճասները որոշող բյուրոն թախանձագին խնդրում է արագացնել պառլամենտի թույլտվությունը 300.000 դրամական օժանդակության հարցը բյուրոյի աշխատանքների համար: Դանդաղեց կարող է հանգեցնել բյուրոյի գործունեության լուծարմանը՝ մասնավոր միջոցներով հավաքված գումարի սպառման պատճառով»:

Իսկ այդ ընթացքում կողովովված, թալանված ու անօթևան հազարավոր հայեր շարունակում էին դիմումներ ներկայացնել հանձնաժողովին՝ հուսալով օգնություն։ Դիմողների թվում էին ոչ միայն ամբողջական տարածքների բնակիչներ (ասենք, Նուշի-Արեշի գյուղացիները), այլև անհատներ, ինչպես, օրինակ, Շանավոր Ծարտարապետ Թողոս Թորամանյանը։ Եվ եթե դիմողների մեծ մասի կորուստները հիմնականում նյութական արժեքներ էին, ապա ծարտարապետինը գուտ հոգևոր բնույթ ունեին և վերաբերում էին ողջ հայությունին։

Հանձնաժողովի աշխատակիցների նյութական վիճակը, սակայն, մնում է անփոփոխ: Յովի Թումանյանի նախագահությամբ, այս անգամ էլ ապրիլի 14-ին հրավիրվում է նույն կենտրոնական խորհրդի, քննիչ հանձնաժողովի, վաճառականության ներկայացուցիչների, Հայաստանի դիվանագիտական, Եվրոպական պատգամավորության ներկայացուցիչների, Վրաստանի հայոց Ազգային խորհրդի խառը նիստոց: Թումանյանը կրկին հանգամանորեն ներկայացնում է քննիչ հանձնաժողովի գործունեությունը՝ նշելով նաև, որ «ՀՀ կառավարությունը խոստումը չի կատարել (Փինանսավորման առումով – Ան. Զ.): Բյուրոյի սկսած գործը մնում է կիսատ, որի պատասխանատվությունը ընկանում է անպայման Հայոց կառավարության վրա»: Նիստը

Մուն որոշվում է «առայժմ բյուրոյի գործունեությունը կամզնեցնել»:

Այսականութեան պատերազմում հայ ժողովրդի կրօս վնասների քննիչ հանձնաժողովն» իր գործունեությունը «Ժամանակավորապես» դադարեցնում է, թեև կատարվել էր հսկայական ծավալի աշխատանք, և հավաքված բազմաքանակ նյութերի հիման վրա ստեղծվել էր պատմական փաստաթուղթ՝ Հուշագիր: Դա, սակայն, Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացնելու բուն նպատակին չծառայեց, քանզի փաստաթուղթը վերջնական տեսքի բերելու համար ֆինանսական անհրաժեշտ միջոցները չհայթապեսին:

1919 թ. ապրիլի 22-ին Հովհ. Թումանյանը Քր. Վերմիշյանին գրում էր. «Ես իմացա, որ Դուք պաշտպանել եք մեր դժբախտ քննիչ բյուրոյի գործը, բայց, այսուամենայնիվ, տապալվել է մեր նշանավոր պառլամենտում: Յակառակ նույնիսկ կառավարության (գումար մեծամասնությամբ) պաշտպանությանն ու առաջարկներին:

Դուք չեք կարող երևակայել, թե առհասարակ բյուրոն, մասնավորապես ես՝ ինչ ենք քաշել եդ բոլորի հետևանքով։

Մի գործ բռնել ենք երեք ամսով և հատկացնելիք գումարը որոշել միայն հինգերորդ ամսին, են էլ միայն մի վեցերորդական մասը:

Եվ են էլ հայ ժողովրդի կրած տաճառքների ու վնասների գործը, նրա արդար պահանջի գործը, մի-լիոնավոր կեղեքվածների ու թալանվածների գործը և էր մարդիկ, որոնք եղբան անկարևոր են համարում եղ գործը ու եղանակ անցնում դրա վրից – էր մարդիկ համարվում են եղ ժողովրդի ներկայացուցիչները: Եվ բանից դուրս է գալիս՝ անքող աշխարհքը պահանջ ունի՝ բացի հայությունը:

Այնինչ, ամերիկական հյուպատոսը, անցյալ օրը իրեն մոտն էի, ինքն առաջարկեց, թե երեք շաբաթից հետո գնում են Փարիզ, տվեք բյուրոյի գործը հետո տանեմ, նոյնիսկ ցույց տվեց, թե ինչ գրենք ու ինչ անի մեր պատգամավորությունը, խոստացավ ինքն էլ ենտեղ օգնի: Վերջապես, մյուս կողմից էլ մեր պատգամավորությունն է գնում – ամեն կողմից նոր մյութեր են դրկում, իսկ մենք ամեն բան թողինք կիսատ ու բուրոյի որնեղոր փանեցինք»:

Եվ այսպես, «Յանաշխարհային պատերազմում հայ ժողովորի կրած վճասների քննիչ հանձնաժողովի» գործը ժամանակավորապես դադարեց և այդպես էլ չհաջողվեց վերսկսել՝ Յայաստանի պառլամենտի «մեղքո՞վ», թե՞ այլ հանգամանքներով... Յարց, որի պատասխանը, թերևս, կտրվի ապագա ուսումնասիրողի կողմից:

**ԱՆՌԻՉԱՎԱՆ ԶԱՔԵՐՅԱՆ**  
«Պատմաբանասիրական հանդեսի»  
գլխավոր խմբագրի տեղակալ,  
բանասիրական գիտությունների ռոկուտը



# ՀԱՅ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Երկրաբանական գիտությունների դոկտոր, Լիլ 1 համալսարանի (Ֆրանսիա) պրոֆեսոր Տաճիկ Ղանիշյանը ծնվել է 1962 թ. Հունաստանի Պիրեյ քաղաքում: Մինչև 12 տարեկանը հաճախել է հյալքական դպրոց: Սա, անշուշտ, նրա ծնողների՝ Թագվոր և Մարի Ղանիշյանների ցանկությունն էր: Այնուհետև Տաճիկը ուսումը շարունակել է հունական դպրոցում: Դակումը Երկրաբանական գիտության նկատմամբ առաջացավ նրա ուսուցիչների շնորհիվ: Դեռևս միջնակարգ դպրոցում մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում բնական գիտությունների հանդեպ: 1980 թ. ընդունվել է Աթենքի համալսարանի Երկրաբանական ֆակուլտետ: Դետագյայում նագիսորատուրան և ասպիրանտուրան շարունակել է Փարիզ 6 համալսարանում՝ մասնագիտանալով մեզոնյան ռադիոլարիանների ուսումնակիրման ասպարեզում: Գիտական ատենախոսությունը նվիրված է Եղել Թեսիս օվկիանոսի հունական ավագանի մեզոնյան ռադիոլարիանների հասակագրման և Երկրադինամիկ իրավիճակի բացահայտման խնդիրներին: 1989 թ. Փարիզ 6 համալսարանում Պատրիկ դե Վեվերի ղեկավարությամբ նա պաշտպանել է վերոհիշյալ աշխատանքը՝ ստանալով դոկտորի գիտական աստիճան:

1992-93 թթ. Տանիելը աշխատել է Լոգամի (Ըստյարիա), 1993-98 թթ. Եղինքուրդի (Մեծ Բրիտանիա) համալսարաններում: 1999 թ. դասավանդել է Եղինքուրդի, 1999-2008 թթ. Փարիզ 6, իսկ 2008 թվականից մինչև այսօր Լիլ 1 համալսարաններում: 2001 թ. Փարիզ 6 համալսարանում պաշտպանել է հարիվուացիոն (Habilitation) աշխատանքը (համապատասխանում է հայաստանյան դրկտորական աստիճանին), որը հնարավորություն է տալիս նաև ղեկավարելու մեծ ժրագրեր: 2008 թվականից Ֆրանսիայի Լիլ 1 համալսարանի պրոֆեսոր է:

Հայ-ֆրանսիական համագործակցությունը ՀՀ ԳԱԱ Երևարաբանության ինստիտուտի և Ֆրանսիայի Մոնպելիե 2 համալսարանի հետ առավել սերտացել է դեռևս 1996 թվականից, որի նախաձեռնողներց էին պրոֆ. Ժան-Կլուդ Գրին և Շերվե Ֆիլիպը: Նշանակալի է 2010թ. IRG ծրագրի, Հայ-ֆրանսիական գիտական համագործակցության շրջանակներում հիմնված միջազգային լաբորատորիան, որում իր նշանակալի ներդրումն ունի նաև S. Դամելյանը: Ծրագրի ֆրանսիական կողմի համադեկավարն է Մարկ Սոստնը, ով Հայաստանի հետ համագործակցությունը սկսել է դեռևս 2003 թ.: Հայաստանում առաջին դաշտային աշխատանքների ժամանակ նմուշարկվել են

## **ԳԱԿՈՐԾ Պողոսյանը վերընդունվեց ՀՅ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի դնօրենի պաշտոնում**

ՀՅ ԳԱԱ թղթակից անդամ Գևորգ Պողոսյանը վերընտրվեց ՀՅ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնում: Հուլիսի 2-ին ՀՅ ԳԱԱ նախագահությունը նիստական քվեարկեց Գևորգ Պողոսյանի թեկնածության օգտին:

Գևորգ Պողոսյանը ծնվել է 1950 թ. նոյեմբերի 16-ին Երևանում: 2003 թ. պաշտպանել է «Սոցիալական տրանսֆորմացիաների տեսությունն ու գործառնությունը Հայաստանում» դոկտորական թեզը: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Նրա հիմնական աշխատանքները նվիրված են սոցիոլոգիական հետազոտությունների ներդրմաբանությանը, աղետների սոցիոլոգիային, միգրացիոն գործնթացներին և հայ ժողովրդի արտագաղթին, ժամանակակից հայ հասարակության սոցիալական վերափոխումների գործնթացին:

Գևորգ Պողոսյանը նաև գքաղվում է Երիտասարդ կաղղերի պատրաստմանը: Եթ-կավարել է Երկու դոկտորական, ութ թեկնածուական, հինգ ասպիրանտական, վեց մա-գիստրոսական գիտական աշխատանքներ:



# ՏԱՐԻԵԼ ԴԱՆԵԼՅԱՆ

Նաև ռադիոլարիխաներ (թեսիս օվկիանոսի նատվածքային ապարներ), որոնց հասակագրման համար Ս. Սոսանը դիմել էր այն ժամանակ Պիեռ և Մարի Կուրի Փարիզ 6 համալսարանի՝ Երկրի մասին գիտությունների բաժնի դասախոս, դրանոր Տանիել Ղանելյանին: Նետագայլում Տ. Ղանելյանը ափսի ապարներ, թե ինչ հոգում-

Հայրենիք գալով՝ Դամելյանն առաջարկում է պատրաստել ուսանողներ ռադիոլարիաների ուսումնասիրման, հասակագրման բնագավառում։ Քետագա համագործակցությունը հնարավոր է դառնում իրականացնել առաջին միջազգային ECO-NET ծրագրի շրջանակներում (2006-2007թ.), որը հայաստանյան կողմից հեկավարում էր ՀՀ ԳԱԱ ԵԳԻ երկրադիմանիկայի լաբորատորիայի Վարիչ Ա.Ա. Վազյանը։ Ծրագրի շրջանակներում կատարվում են մի շարք հետազոտություններ, որոնց հնարավորությունը Հայաստանում չկար։ Այդ տվյալները դառնում

Են Լ. Սահակյանի՝ 2008 թ. պաշտպանած թեկնածուական թեզի մաս: Դանելյանը դեկավարել է յոր թեկնածուական թեզեր և երկու հետքեկնածուական աշխատանքներ, բազմաթիվ մագիստրոսական և բակալավրիական ուսումնասիրություններ: Նրա դեկավարությամբ 2010 թ. գ. Ասատրյանը (Դայաստան) պաշտպանել է թեկնածուական թեզը և 2013-2014 թթ. իրականացրել հետքեկնածուական աշխատանքը:

ՂանԵլյանի աջակցությամբ 2011-2012  
թթ. Երկրաբանական գիտությունների  
ինստիտուտի աշխատակիցներ Գ. Գրի-  
գորյանը (պյուֆ. Դ. Վաշարդի ղեկավա-  
րությամբ) և Ա. Սուրբիայանը (պյուֆ. Տ.  
ՂանԵլյանի ղեկավարությամբ) իրենց  
կրթությունն են շարունակել Ֆրանսիայի  
Լիլ 1 համալսարանի մագիստրատուրա-  
յում (2-րդ կուրս)՝ պալեոզոյան ֆուլգուլի-  
նիդների և մեզոկայնոզոյան նանոպ-  
լանկտոնների ու նումուլիտների ուսում-  
նասիրման ասպարեզում:

2013-2014 թթ. ուսումնական տարվա համար լաբորատորիական մագիստրատուրայի երկրորդ կուրսն է շարունակում երևանի պետական համալսարանի և ԳԱԱ երկրաբանության ինստիտուտի լի թուղթիայի լաբորատորիայի աշխատակից Ա. Արյունը: Նա «Geosystemes» լաբորատորիայում S. Դանելյանի ղեկավարած հնէաբանական հետազոտական խնդի դոկտոր, պրոֆեսոր Ա. Տրանստոյի ղեկավարությամբ իրականացնում է «Երջակա միջավայրի փոփոխությունների վերակառուցումը ըստ Սևանի ավագանի գետաձայնի նստվածքների ու-

## Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

սումնափրության» թեմայով մագիստրոսական աշխատանքը:

Պրոֆեսոր Դամելյանը հրատարակել  
է 75 գիտական հոդվածներ, որոնց մեջ  
մասը՝ բարձր վարկանիշ ունեցող ամ-  
սագրերում: Ունի 83 գիտաժողովի թեզիս-  
ներ: Դաշտային աշխատանքներ է իրա-  
կանացրել Կիպրոսում, Ֆրանսիայում,  
Հունաստանում, Իտալիայում, ճապո-  
նիայում, Մեծ Բրիտանիայում, Ռուսաս-  
տանում և իր հարազատ Հայաստանում:  
Ատլանտյան օվկիանոսի հատակի հո-  
րատման աշխատանքների համար Leg  
207 գիտական թիմի կազմում նաևնակ-  
ցել է օվկիանոսագիտական նավարկութ-  
յանը:

Տանիել Դանելյանը ղեկավարում է Հիլ 1 համալսարանի Գեոսիստեմ լաբորատորիայի հնէաբանական հետազոտական խումբը: Նա եղել է Elsevier-Masson-ի կողմից հրատարակվող «Միկրոհնէաբանական ակնարկ» միջազգային ամսագրի խմբագրի օգնականը (1999-2004 թթ.), իսկ 2005 թ.-ից գլխավոր խմբագիրն է: Տանելյանը 2009 թ.-ից միկրոհնէաբանական կազմակերպության «սիլիցիումային բրածոներ» խմբի նախագահն է, 2009 թ.-ից՝ ռադիոլարիային հնէաբաններ միջազգային ասոցիացիայի պալեոզոյան աշխատանքային խմբի (InterRad) նախագահը: 2006-2007 թթ. եղել է Ֆրանսիայի հնէաբանական ասոցիացիայի նախագահը, իսկ 2004-2005 թթ.՝ այդ խորհրդի անդամ: Նա գիտական ծրագրերի ղեկավար է, որը ֆինանսավորվում է Ֆրանսիայի Գիտության հիմնադրամի, նավթային ընկերության հովանավորությամբ ազգային երկողմ համաձայնագրերի հիման վրա:

Պրոֆեսոր Դանելյանի ղեկավարությամբ կազմակերպվել են 9 գիտական կոնֆերանսներ և նիստեր:

Հաշվի առնելով Տ. Ղանիեսանի գիտական, մանկավարժական մեծ վաստակը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2011 թ. նրան ընտրեց ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Տանիել Ղանելյանն ակտիվորեն մաս-  
նակցել է Փարիզի հայ համայնքի աշխա-  
տանքներին, եղել է Փարիզի հայկական  
համայնքի երգչախմբի անդամ: Ունի եր-  
կու երեխս (աղջկե և տղա), ովքեր տանը  
հայրիկի հետ խոսում են հայերեն, նայրի-  
կի հետ՝ անգլերեն, իսկ կրթական հաս-  
տառություններում՝ ֆրանսերեն:

Ներկայումն Տաճիկ Դանելյանը Երիտասարդ մասնագետների պատրաստման և գիտական համատեղ ծրագրերի շրջանակմերում ակտիվորեն համագործակցում է ՀՀ ԳԱԱ Երկրաբանության ինստիտուտի հետ:

# Վիզեն Թոփուզյանը միաձայն վերընդունվեց ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտաբեկնոլոգիական կենտրոնի վնօրենի պաշտոնում

Հունիսի 12-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում Վիզեն Թովուայնը միաձայն վերընտրվեց ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրենի պաշտոնում:

Վիզեն Թոփուլյանը ՀՅ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական Կենտրոնի տնօրենի պաշտոնը ստանձնել է 2007 թվականին: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների և ամինաբրուների ու պեսուիդների քիմիան: Վիզեն Թոփուլյանը ՀՅ ԳԱԱ ՕՂԲԳՏԿ գիտական խորհրդի նախագահն է, «Օրգանական քիմիա» 010 խորհրդի նախագահը, «Ֆարմա» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ: Նա ղեկավարել է գիտությունների յոր թեկնածուի, քսան մագիստրոսի, մեկ ասավիրանտի գիտական աշխատանքներ: Վիզեն Թոփուլյանը հեղինակել է 134 գիտական հոդված և հեղինակային արտոնագիր, 2 ուսումնական ձեռնարկ: 2013-ին պարգևատրվել է ՀՅ ԳԱԱ վաստակագործ:

## ՀՅ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

**Ականավոր Գիտնական, արևելագետ-միջազգայնագետ Եվգենի Պրիմակովը երկար տարիներ պիտի պահպան է այս այսի գիտական կենտրոններ, ինչպես ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի արևելագիտության, ապա նաև համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտները։ Նա միաժամանակ հայտնի պետական գործիչ է և Խորհրդային Սրության վկուզումից հետո զբաղեցրել է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարի, ապա նաև վարչապետի բարձր պաշտոնները։ Աշխատանքի բերումով նա առնչվել է նաև Դայաստանի ու հայության տարբեր խնդիրներին, այդ թվում և նրա պատմության ողբերգական էջերին, արտահայտել իր տեսակետները դրանց վերաբերյալ։ Նրա շրջապատում և մտերիմների շարքում մշտապես եղել են երևելի հայ գործիչներ՝ տնտեսագետներ, պատմաբաններ,**



# ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՊՐԻՄԱԿՈՎԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ηήψωναδετυπάρη, ρθήγκανέρη, αρψευση  
φηρόχεζερη, ζανηρήκιψη προπάνη θα λαψω-  
τεηγαλη έτηλη λαμπτεράνη κημάνωσηνηρη-  
θερήκιν ο θραδηνη ληπτηνηρη: Τηαδη  
θαψωσητερη θαν θαλη αιρεθετηρηπονηθη-  
ρη θαγωσητανη, ζηψημέθερη λαμη ιψετω-  
λανη η ληπωσηλακανη η θεληψωρηθερη η η  
φηρόχεζερη, μηταψηρηλακανηποτερη, θα  
μασηναψηρηλακενη` λαμη φητηνηλακανηθερη,  
αιη θεψημη η αρψετηλακετηθερη ηθετη:

1980-ականների սկզբներին Հայաստան ժամանեց Ասիայի և Աֆրիկայի համերաշխության համաշխարհային կազմակերպության պատվիրակությունը, որը Ասիայի և Աֆրիկայի համերաշխության խորհրդային կոմիտեի նախագահի տեղակալի կարգավիճակով գլխավորում էր ակադեմիկոս Ե. Պրիմակովը: Պատվիրակության կազմում էին շուրջ 30 երկրների, այդ թվում՝ Հնդկաստանի, Չորդանանի, Սիրիայի, Թուրքիայի, Գանայի, Մալիի և այլ երկրների պետական, քաղաքական, հասարակական գործիչներ, մտավորականության ներկայացուցիչներ, լրագրողներ: Հայաստանում գտնվելու օրերին պատվիրակությանն ուղեկցում էին, ոչ միայն որպես ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ներկայացուցիչներ, այլև որպես Ասիայի և Աֆրիկայի համերաշխության խորհրդային կոմիտեի անդամ, հաներաշխության Հայկական կոմիտեի նախագահության անդամ, խորհրդարաբական երկրների բարեկամության և մշակութային կապերի ասոցիացիայի վիցե պրեզիդենտ, հայ-արաբական բարեկամության և նշակութային կապերի պատվիրակությունների նախագահ և առաջնախարար Արմեն Տիգրանյանը:

Ամենայն Րայոց կաթողիկոս Վազգեն Ա-րաջինի հետ: Պատվիրակության անդամները շատ գործ էին, որ պետք է հանդիպում ունենան Վեհափառի հետ, որի կյանքի և գործունեության մասին նրանցից ունաճ ունեին որոշ տեղեկություններ: Ե. Պրիմակովը նույնպես անհամբեր սպասում էր այդ հանդիպմանը և ասում էր, որ Վեհափառը այն քերից մեկն է, որին հանդիպելը մեծ պատիվ է յուրաքանչյուր մարդու համար: Եվ ահա մենք Եջմիածնուն ենք՝ կաթողիկոսական Վեհարանում: Պատվիրակության անդամներին դիմավորեց Վեհափառն իր սքանչելի ժայիռը դեմքին և մեկ առ մեկ ծերքով բարեկց բոլորին: Նա ամբողջ զրույցը վարեց շատ աշխատույթ՝ իրեն հասուն մտավորականին վայել ոճով: Երբ պատվիրակության բոլոր անդամները զբաղեցրին իրենց տեղերը, Վեհափառը՝ դիմելով ինձ, ասաց. «Պրօֆեսոր, ո՞վ պետք է ներկայացնի պատվիրակությանը»: Ես պատասխանեցի, որ պատվիրակության դեկապառը ակադեմիկոս Պրիմակովն է: Քանի որ ակադեմիկոսը ուսւերեն էր խոսում, ես ստիպված էի թարգմանչի դեր կատարել և նրա ասածը թարգմանել հայերեն, երբեմն նաև՝ անգլերեն: Վեհափառը մեծ ուշադրությամբ էր հետևում նրա խոսքին, երբեմն նաև ինքը էր իր կողմից շատ յուրահատուկ կերպով միջամտում՝ մեկ բառով կամ նախադասությամբ: Երբ Պրիմակովը ներկայացրեց Շնորհաստանի ներկայացուցչին, որը Ազգային կոնգրես կառավարող կուսակցության դեկապառներից էր և երևելի ամճնավորություն, Վեհափառը շատ բարի խոսքեր ասաց Շնորհաստանի մասին՝ հիշեցնելով հայ-հնդկական պատմական կապերի և հայ համայնքի մասին: Վեհափառը շատ

զերմ արտահայտվեց նաև արաբների մասին, երբ է. Պիրմակովը ներկայացրեց Հորդանանի Հաշիմյան քաջավորության տեղեկատվության նախարարին՝ ընդգծելով, որ Հորդանանն արաբական այն երկրներից մեկն էր, որն ապաստան տվեց Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանությունից փրկված հայ բռնագաղթվածներին:

Բայց բոլորն անհամբեր սպասում էին, թե ինչպես է Ե. Պրիմակովը ներկայաց-  
նելու Թուրքիայի ներկայացուցիչ, հայտ-  
նի լրագրող Սյումբազ Սոյսալին, որը շատ  
հաճախ էր թերթերում, այդ թվում և Եվրո-  
պական, համեմու գալիս հայ-թուրքական  
հարաբերություններին և հայ ու թուրք  
ժողովուրդների պատճական անցյալին  
Ավիրված հոդվածներով: Նախքան Հա-  
յաստան գալը նա թերթերում տպագրել  
էր հոդվածաշար, որն առաջացրել էր հայ  
հանրության դժողոհությունը: Ե. Պրիմակո-

«Ապելի լավ կլիներ սուլբաններն առանձին հայերի պաշտոններ չտային, քան կազմակերպելին զանգվածային կոտորածներ»: Ապա ժպտալով Անենայն Հայոց կաթողիկոսը դիմեց Սոյսալիմ՝ ասելով. «Ես հասկանում եմ, որ Թուրքիան դեռևս պատրաստ չէ ընդունելու Հայոց ցեղապանությունը, դա ժամանակ է պահանջում, որպեսզի թուրքերի մտածողության ու հոգեբանության մեջ տեղի ունենա համապատասխան փոփոխություն, իսկ դա վաղ թե ուշ, տեղի է ունենալու»:

Պատվիրակության բոլոր անդամները մեծապես տպավորված էին Վեհափառի այդ խոսքերից և պահվածից: Բաժանման պահը շատ հուզիչ էր: Պատվիրակության բոլոր անդամները նոտենում էին Վեհափառին, սեղմում նրա ձեռքը, խոնարհվում և շնորհակալական խոսքեր ուղղում նրան՝ ջրաքանելով, որ այդ պահին նրանք շատ երջանիկ են: Իսկ ես շատ հպարտ էի:

Հատ գոհ էր նաև ակադեմիկոս Պրիմակովը: Նա խիստ տպավորված էր Կեհափառի այն բանաձևից, որ Թուրքիան դեռևս պատրաստ չէ ճանաչելու Դայոց ցեղասպանությունը, և շատ խորիմաստ համարեց Թուրքերի մտածողության և հոգեբանության մեջ համապատասխան փոփոխության անհրաժեշտության մասին նրա տեսադրությը: Նա դա համարեց նորություն, որին պատկանում է Դայոց ցեղասպանության ճանաչման հեռամվարությունը: Իր հիացմունքը հայտնելով Կեհափառի հետ հանդիպման, Վազգեն Առաջինի խորիմաստ մտքերի, բարձր կուլտուրայի և ցուցաբերած դիվանագիտական մեծ տակտի վերաբերյալ՝ Ե. Պրիմակովը շեշտեց, որ «Դայոց եկեղեցին կարող է հպարտանալ, որ ննան դեկապար մտավորական»:

X X X

Ակադեմիկոս Ե. Պերմակովը 1977-1988 թթ. գրադեցնում էր ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնը: Այդ տարիները եղան գիտական սերտ համագործակցության տարիներ երա գլխավորած ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջև, մասնավորապես գիտական կառուերի պատրաստման, համատեղ գիտական աշխատանքներ կատարելու, գիտական համաժողովներ անցկացնելու և այլ ոլորտներում: 1985 թ. մեր երկուսի նախաձեռնությամբ և մեր ինստիտուտների ջանքերով Երևանում գումարվեց արաբագետների համամիջութենական IV գիտաժողովը, որը զնահատվեց որպես կարևոր իրադարձություն: Այդ և այլ գիտաժողովներում մշտական քննարկվող թեմաներից մեկը եղել է ցեղասպանության, առաջին հերթին Հայոց ցեղասպանության հարցերի քննարկումը, որին կարևոր նշանակություն էին տալիս ոչ միայն հայ, այլև Ռուսաստանի արևելագետները, այդ թվում Ե. Պերմակովը: Համագործակցության կարևոր ձևերից մեկը փոխադարձ այցելություններն **➤**



## **Երևանում մեկնարկեց «Զահուլյանական ընթերցումներ» միջազգային համերենագիտական գիտաժողովը**

ՀՅ ԳԱԱ Հրացյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում վերջերս տեղի ունեցավ «Զահորկյանական ընթերցումներ» միջազգային հայերենագիտական գիտաժողովը։ Գիտաժողովին նաևնակցում էին գիտնականներ Հայաստանից, ԱՄՆ-ից, Կանադայից, Ավստրիայից, Շվեյչարիայից, Իրանանից։ ՀՅ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժնումնքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յու. Սոլվարյանն իր բացման խոսքում նշեց, որ անցած տարիների ընթացքում գիտական հանրության ուշադրությանն են ներկայացվել լեզվի ուսումնասիրության տարբեր բնագավառներին վերաբերող հարյուրավոր աշխատանքներ, տեղի են ունեցել արդյունավետ քննարկումներ և բանավեճեր, որոնք էականորեն նպաս-

տել են հայ լեզվաբանական մտքի գարզացմանը: Ողջույնի խսորպվ հանդես եկան նաև ԱՄՆ-ի հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցության նախագահի, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Գեղրդ Բարդակյանը, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեյյանի անվան գրականության ինստիտուտի տնօրին Ավետիք Իսահակյանը: Այսուհետև գիտաժողովին ներկայացված գեկույցները նվիրված են հայոց լեզվի գարզացմանը, կառուցվածքին, գործառնութեանի:

Նշենք, որ «Զահուկյանական ընթերցումներ» խորագրով գիտաժողովները լեզվի ինստիտուտում կազմակերպվելում են այնեն տարի՝ մայիսի 2006 թվականից:

### **ՀՅ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն**



չինչ չխանգարի, այսինքն՝ չլինեն խոշորամասշտաբ օգտագործումներ, ինչն անհնար է Մերձավոր Արևելքում։ Այսպիսվ, ստացվում է ջրի ղեֆիցիտ։ Ըստ դոկտոր Ֆալկերմանի մեթոդի, եթե տվյալ երկրի բնակչության յուրաքանչյուր շնչին տարեկան բաժին է ընկնում 1700 խոր. մետրից պակաս չուղ, ապա այդ երկուում առկա է «ջրային լարվածություն», իսկ եթե այդ ցուցանիշը 1000 խոր. մետրից ցածր է, ապա այդ երկիրը ջրի ղեֆիցիտ ունի։

1955թ. աշխարհում ջրի դեֆիցիտ ունեին յոթ Երկրներ, որոնցից երեքը՝ Կատարը, Հորդանանը և Քովեյթը, գտնվում են Մերձավոր Արևելքում: 1990թ. սկսած՝ Վերոհիշյալ յոթին ավելացան ևս 13 երկրներ, որոնցից ութը՝ Ալժիր, Իսրայել, Բահրեյն, Սաուդյան Արաբիա, Սոմալի, Թունիս, Արաբական Միացյալ Նահիյութուններ, Եմեն, Մերձավոր Արևելքում են: ՄԱԿ-ի տվյալներով 2025 թ. ևս յոթ մերձավորարևելյան երկրներ՝ Ե-

# **«ՀՐԱՅԻՆ ԽԱՐԱՋԱԼ» ՄԵՐՃԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ**

Զուրծ միշտ էլ բացահիկ նշանակություն է ունեցել Մերձավոր Արևելքի ժողովուրդների կյանքում: 20-րդ դ. Մերձավոր Արևելքում հակամարտությունների ավանդական պատճառ համարվել է նավթային գործոնը: Պետությունները վիճել են սահմանների ծզգուման շուրջ՝ հուսալով, որ ավագի յուրաքանչյուր քառ. Կիլոմետր կարող է դառնալ հարստության նոր աղբյուր: Ազելին, այդ սահմանների մեջ մասը որոշվել է նավթի առկայությունը հաշվի առնելով: Մինչդեռ ջրի ռեսուրսների օգտագործման հարցը ամենահավանական կոնֆլիկտածին գործոնն է Մերձավոր Արևելքի ապագա քաղաքական կյանքում:

Թուրքիայից մինչև Օնան, Եգիպտոս և Լիբիա տարածվող բոլոր երկրների գերխնդիրն այսօր ջրի կարիքների բավարարումն է, քանզի գնալով խիստ անհամատեղելի են դաշնում այդ երկրների բնակչության աճի և ջրի պահանջների տեմպերը։ Տարածաշրջանի ամենամեծ գետի՝ Նեղոսի ավազանի բնակչությունը կրկնապատկվում է յուրաքանչյուր երեսուն տարին մեկ, մինչեւ ջրի քանակը չի ավելանում։ Ավելին, գետի ջրերի վերականգնման միջին նորման կազմուն է տասնութ օր, իսկ մեծ լճերինը՝ հազար տարի։ Այն էլ այն դեպքում, եթե տվյալ ջրային ավազանի մերականգնմանը ո-

փայտոս, Եթովպիա, Իրան, Լիբիա, Մարոկկո, Օնան, Սիրիա, Կմտնեն այդ ցուցակի մեջ: Դա նշանակում է, որ Մերձավոր Արևելքում կլինեն 18 երկրներ, որոնք կունենան ջրի դեֆիցիտ: Մերձավոր Արևելքի բնակչությունը 1990 թ. 314 մլն մարդ էր, 2020թ. այն կկազմի 348 մլն մարդ, իսկ ջրի պահանջը տարեցտարի ավելանում է 470 մլրդ խոր. մետրով: Դա 132 մլրդ խոր. մետրով ավելի է, քան ամբողջ ջրային պահանջները (այդ բվում՝ պահուստայինը) միասին մերժակ: Սա սահարանում է ուրա-

պղում են, որ իրենք պետք է վերցնեն այնքան ջուլ, որքան ուղղում են, իսկ գետերի ստորին հոսանքներում տեղակայված երկրները (օրինակ՝ Եգիպտոսը) միշտ առարկել են այս տեսակետի դեմ: Միջազգային իրավունքի ջրային հարցի հետ կապված անորոշությունն առաջանում և առաջանելու է բազմաթիվ վեճեր: Եզակի դեպքեր կան, երբ ԱՄ-ը կամ Միջազգային դատարանը վճիռ արձակած լինեն սահմանային գետերի կամ լճերի ջրերի համատեղ օպտագողման վերաբերյալ:

Յոպիկն իառող եղել և մըսում



Թօնորքիան որոշեց Աթարվությի ջրամբարի դիմաց նոր արիեստական լիճ կառուցել և այնտեղ ուղղել Եփրատի ջրերը: Այդ քայլվ փորձում էր ճնշում գործադրել Սիրիայի Վրա, որպեսզի վերջինս դադարեցնի Քրդական Աշխատավորական կուսակցությանը ցուցաբերվող օգնությունը: Այս նախագծի իրականացումը ջրի սով կառաջաներ նաև հրաքում: Սիրիան և Իրաքը, որոնք մինչ այդ անհաջող թշնամի-

## Լուս է դեսել

Լույս է տեսել «Պատմաբանասիրական հանդեսի» այս տարվա անդրանիկ համարը։ Այն, ինչպես միշտ, բաղկացած է մի քանի բաժիններից։

«Հոդվածներ, հաղորդումներ» բաժնի առաջին մասն սկսվում է Աթյառա Դոլոխանյանի «Ստեփանոս Օքելյանի պատմության ֆրանսերեն առաջին թարգմանությունը» հոդվածով։ Հայաստանի ճարտարապետության պատմության հիմնովին վերանայման խնդրին է անդրադարձել Կահագն Գրիգորյանը։ Անուշավան Զաքարյանը հոդված է հրապարակել (ոռուսերեն) «Պետերբուրգի գիննվորական-իրավաբանական ակադեմիայի պրոֆեսոր, գնդապետ, լրագրող, հրապարակախոս, հասարակական գործիչ Վ. Ի. Պլետնյովի՝ Հայկական հարցի վերաբերյալ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին կարդացած դասախոսության մասին։ Հայոց ցեղասպանությանը և հրեական հոլոքոստին նվիրված բանգարանների մշտական ցուցադրությունների համեմատական վերլուծությամբ հանդես է եկել Խաչատրուր Կոբելյանը։ Գևորգ Վարդանյանն իր հոդվածում բացահայտել է հույների տեղահանությունների ու կոտորածների և Հայոց ցեղասպանության (1913-1923թթ.) միջև եղած զուգա-

**հեռները:** Ասածին մասն ավարտվում է Արարատ Հակոբյանի «Ուսաստանի ու Հայաստանի խորհրդայնացման գործընթացների և Միակուսակցական Վարչակարգի հաստատման մի քանի պատմական զուգահեռներ» հոդվածով:

Երկրորդ մասի առաջին հոդվածը Յամլետ Սարգսյանին է: Սարիամ Գևորգյանը վեր է հանել Յակոբ Պարոնյանի «Ազգային ջութեր»-ի գրապատճական արժեքը: Կարսիկ Ներսիսյանը կատարել է հայկական ժողովրդական հանելուկների լեզվաոճական վերլուծություն: Արամ Յովհաննիսյանի հոդվածում գիտական քննության է ենթարկվել Կիլիկիայի հայկական թագավորության և Կարամյան պետության հարաբերությունների պատճերյան մի հատված (13-րդ դարի 2-րդ կես ): Աննա Արևշատյանն ուսումնասիրել է «Յաղագ գիտութեան ծայնից» մեկնության հեղինակի հարցը՝ Անանիա Նարեկացի՝, ու Անանիա Շեռակաչ:

**թԵ Ասարիա Ծրագացի:**  
«Քննարկումներ» բաժնում  
**Պավել Զորաբյանն անդրա-  
դարձել է Ղարաբաղի խաների  
օրինականության հարցին՝ Շու-  
շիի քաղաքական պատմութ-  
յան համատեքստում (ռուսե-  
րեն): Արտակ Սաղայանը գի-  
տականորեն քննել է Արցախի  
մելիքների պատմության մի  
պահի հաջործ:**

բանի հարցեր:

«Յրապարակումներ» բաժ-  
նում Գայանե Մախոնուրյանը  
ներկայացրել է Յայոց ազգային  
խորհրդի նիստերի՝ Յայաստա-  
նի Յանրապետության անկա-  
խությանն առնչվող արձանագ-  
րությունները: Ուրեմն Սահակ-  
յանը հրապարակել է պրոֆեսոր  
Վ. Վ. Սապոննիկովի հաշվետ-  
ևությունը՝ Արագուի համաշխատ-



նալ լարվածության և կոնֆլիկտածին աննախառեա առօրութ:

վերականգնած միջնության ստորանք կազմում է տասնութ օր, իսկ մեծ լճերինը՝ հազար տարի: Այն էլ այն դեպքում, եթե տվյալ ջրային ավագանի վերականգնանանու դաշտավայրը անմասնական արդյունք:

Զբային ռեսուրսների համատեղ օգտագործման վերաբերյալ որևէ կոնկրետ համաձայնագիր չկա: Նախկինում այդ հարա-



Է տարածաշրջանում ամենահիճ հականարտության՝ արաբ-իսլամյելականի առանցքային հարցերից մեկը, իսկ Թուրքիան ջրային հարցերում լուրջ տարածայնություններ ունի Իրաքի և Սիրիայի հետ: Մերձավոր Արևելքում առկա են երեք խոշոր «ջրային համակարգեր»՝ Նեղոսի, Տիգրիս-Եփրատյան և Շորդհանանի ավազանները: Երեքում էլ այս հարցի շուրջ առկա են լուրջ տարածայնություններ և հականարտություններ:

# ՏԵՂՐԻՄ- ԵՓՐԱՍՏԱՆ ՈՎԱԶՈՒ

«Զրային խարազանի» քաղաքականության կիրառման լավագույն հմտությունը դրսևում է Թուրքիան: Դեռ 1990 թ.

## ԱՐՄԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ





## Լողացե՛ք ուկու մեջ

Սույն արտահայտությունը ընկալե՛ք ուղիղ ի-մաստով: Նման հաճելի հնարավորություն ունեն Տոկիոյի գրոսաշրջիկները և հենց իրենք՝ ճապոնացիները:

Ճապոնիայի խոշորագույն իյուրանոցները կահավորող ֆիրման «Էլիտար» իյուրանոցների տերերին առաջարկել է ձեռք բերել ոսկյա լոգարաններ, որպեսզի հաճախորդներն ըմբոշիննեն այն զգացողությունը, թե ինչ է նշանակում լոգանք ընդունել ուկու մեջ:

Ուկյա շրեն լոգարանների հետ առաջարկվում է նաև ուկյա բազ (խկական ուկուց): Թե ինչ կարծենա նման պերճանքը, դժվար է հաշվել, սակայն, ինչպես ասում են, շրեն ապրելը լավ բան է: Եվ մեկ լավ ասում են, թե «Եթե բոչի յուղը շատ է լինում...»:



## ՇՆԵՐԸ ՃԵՌՔ ԵԼ ԲԵՐՈՒՄ ՆՈՐ ԺԱՍԼԱԳԻԿՈՒԹՅՈՒՆ



Ինչի՞ են ընդունակ շները: Կարծում ենք, որ երեխան էլ կասի, որ շները հիանալի պահապաններ են, հետախույզներ, որսորդներ, ոչխարապահներ, սահմանապահներ, խեղդվողներին փրկողներ, դայակներ և այլն, և այլն:

Բայց որ կան նաև շներ, որոնք օգնում են մեղվարույժներին, համոզված ենք քերը գիտեն:

Մեր չորքոտանի բարեկամների այս նոր մասնագիտությունը:

յունը կարելի է անվանել այսպես. «Փեթակները հետազոտող տեսուչ»:

Բանն այն է, որ ինչ-որ մանրէներ հաճախ վարակում են մեղուներին, և ամբողջ մեղվածանիքը հիվանդանում է ու կործանվում: Եվ որպեսզի ստուգվի՝ փեթակը հիվանդ է, թե՞ չէ, պետք է այն բաց անել և մանրագնին հետազոտել: Իսկ բացել կարելի է միայն տաք եղանակին, այլապես մեղուները

### Կմրսեն և կոչնչանան:

Լարրադոր ցեղի Մարս անունով շունը մեղուների այդ ծանր հիվանդությունը հայտնաբերելու համար ամենևիճ կարիք չունի բացելու փեթակը: Դիվանդությունն ախտորոշելու նա լրիվ դեկավարվում է իր զգացողությամբ:

Անկախ եղանակից, «տեսուչը» արագ «համայց» է կատարում փեթակները: Եվ հենց որ փեթակներից որևէ մեկը կասկած է հարուցում, նստում է փեթակի առաջ և նայում իրեն ուղեկցող մեղվապահին: Դա նշանակում է, որ փեթակը հիվանդ է, և մեղվարույժը պետք է շտապ միջոցներ ճեղնարկի փրկելու հիվանդ մեղվարնուանիքը: Հետաքրքիր է և այն, որ Մարսը երբեք չի սխալվում:

Մեղվարույժներին օգնելու համար այսօր աշխարհի որոշ երկրներում շներին ուսուցանում են մեղվապահի այս նոր մասնագիտությունը, և «տեսուչ-շների» թիվը գնալով ավելանում է:

### Կապտուկներով.

- Այդ ո՞վ է թեզ այդպես նախշել, անհանգստանում են ընկերուիները:

- Ամուսին:

- Իսկ մենք կարծում ենք, թե նա գործուղման մեջ է:

- Ես էլ էլ այդպես կարծում:

### ◎

Երբ ամերիկյան աստղագնացներն իջնում են Լուսնի վրա, L. Ի. Բրեժենեկ Կրեմլ է հրավիրում մեր տիեզերագնացներին և ասում:

- Ամերիկացիներն արդեն լուսնի վրա են: Յարկավոր է առաջ անցնել նրանցից: Մենք այսուղի խորհրդակցեցինք և որոշեցինք ձեզ իջնենել Արևի վրա:

Տիեզերագնացները հուզվեցին, խառնվեցին իրար...

- Մենք պատրաստ ենք կատարելու հայրենիքի ցանկացած առաջադրանքը... բայց չ' որ այնտեղ անմիջապես մոխիր կդառնանք:

- Ի՞նչ է, ընկերներ, ձեր կարծիքով, այստեղ հիմարնե՞ր են նստած: Որոշված է, կթոքը գիշերը:

○



Վագոնի խցիկներից մեկուն նստած են երկու ուղարկոր: Նրանցից մեկը երկար զննում է դիմացին և ապա ասում:

- Գիտե՞ք, եթե բեղերը չլինեն, դուք շատ նման կլիմերի ին կնոջը:

- Յա, բայց ես բեղեր չունեմ:

- Տեսնում եմ, իսկ կինս ումի:

## ՏԻՇԱ ՄԵՎԵԼ

Օրերս աշխարհի գիտական մտցի լավագույն ներկայացուցչները որոշել են 10 այլ սննդատեսակները, որոնց մշտապես օգտագործելու պարագայում մարդը իրեն կզգա առույգ, առողջ և մասավանդ երիտասարդ:

Եվ այսպես, որո՞նք են այդ սննդատեսակները, որոնք հասանելի են բոլոր մահկանացներին և որոնք երաշխավորվում են որպես մշտական և անհրաժեշտ ուտելիք (ներկայացնում ենք վեցը):

### Շագանակագույն բրինձ

Օգնում է նվազեցնել խոլեստերինի չափը, սիրտ-անոթային հիվանդությունների վտանգը, արմատապես պակասեցնում ուղիղ աղիի քաղցկեղի, լեղապարկի քարերի, շաքարախտի և գիրացման հավանականությունը: Բրինձը կենսականորեն կարևոր է աղեստամոքսային համակարգի գործունեության համար, որը տարիքի հետ կորցմում է ակտիվությունը:

### Շավկիթ

Սպիտակուցիք և լութերինի անփոխարինելի աղբյուր է, որը աչքերը պաշտպանում է կատարակտից: Բազմամյա հետազոտությունները ինք են տալիս եզրակացնելու, որ հավկիթը կանխարգելում է արյան երակների խցանումը՝ դրանով իսկ նվազեցնելով սրտամկանի և ուղղի կաթվածի վտանգը:

### Սպանախ

Այս բանջարեղենում առկա են այնքան սննդարար նյութեր, որ մոցակից չունի: Սպանախը երկարի, C, A, K և հակաօքսիդամսների աղբյուր է: Եյութեր, որոնք մարդուն օգնում են պաշտպանվել սրտամկանի և գլխուղեղի կաթվածից: Սպանախը պաշտպանում է քաղցկեղային նյութերից:

### Բանան

Բանանի մեկ հասած պատուղը պարունակում է 467 միլիգրամ կալորի, որը ամերածեցն է, որպեսզի մակաները (հատկապես սրտամկանը) պահպանվեն ուժեղ և առողջ: Այն միաժամանակ նվազում է քաղցկեղային նյութերի մակարդակը:

Բանանը կանխում է սիրտ-անոթային հիվանդությունները: Այն միաժամանակ չնորբացնում է թքվայնությունը և դրանով օգնում առողջ պահել ստամոքսը:

### Շավի միս

Ամենաառողջարար միսն է: Կերե՛ք հատկապես հավի կրծքամիսը, որում քիչ են ճարպերը, չմոռանար համել կաշին: Յավի միսը սելենի աղբյուր է, որը կանխարգելում է քաղցկեղունը: Յարուստ է 8 խմբի վիտամիններով, որոնք բարձրացնում են էներգիայի մակարդակը և խանում ուղեղի աշխատանքը:

### Ձկան միս, մանավանդ լոսոսի

Լոսոսի միսը գերադասելի է բոլոր նյութ ծկնատեսակներից, քանի որ հարուստ է Օմեգա-3 խմբի ճարպերով, որոնք իջեցնում են խոլեստերինի մակարովակը, պաշտպանում քաղցկեղի մի քանի տեսակներից և կանխարգելում արյունատար անոթներում խցանումների առաջացնումը: Լոսոսի միսը թեթևացնում է ընկճվածության զգացողության վիճակը և կասեցնում իջողության վատացման պրոցեսը:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը հայտարարում է մրցույթ ինովացիոն ծրագրերի համակարգույթի թափուր տեղի համար:

Անհրաժեշտ փաստաթղթերը հայտարարության օրվանից մեկ ամսվա ընթացքում պետք է ներկայացնել հետևյալ հասցեն: Անհրաժեշտ փաստաթղթերի համար գիտական հետազոտությունների կենսաբանական փորձարնություն:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը կազմակերպում է դասմբաց «Կենսաէթիկայի իիմունցները: Կենսարժկական և կլինիկական հետազոտությունների կենսաէթիկական փորձարնություն»:

Դասմբացը վարելու են ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի ԱՍԽ առողջապահության և սպողական ծառայության նախարարության կողմից գրանցված կենսաէթիկայի խորհրդի բարձր որակավորում ունեցող փորձագետներ:

Դասմբացի ավարտ